

ԴԱՍ 6.4. Արդի միգրացիայի գործընթացները, դրանց հետևանքներն ու կարգավորման հիմնախնդիրը



Վիտե՞ս որ...

Միգրացիոն գործընթացներ տեղի են ունենում նաև վայրի բնության մեջ: Կենդանիների շատ տեսակներ, հատկապես՝ խոյրակեր, սմբակավոր կենդանիները, տարվա տարբեր սեզոններին հարյուրավոր, նույնիսկ հազարավոր կիլոմետր ճանապարհ են անցնում՝ կեր հայթայթելու նպատակով: Դիտարկենք Աֆրիկայի սավաննաների և նոսր անտառների օրինակով: Դուք հավանաբար հիշում եք, որ այս բնական զոնան առավելապես տարածված է մերձհասարակածային կլիմայական գոտում, որը բնութագրվում է շոգ ու խոնավ ամառով, փաք ու չորային ձմեռով: Առանձնացվում է երեք ենթազոնա՝ բարձրախոյրային սավաննա (8-9 ամիս խոնավ, 2-3՝ չորային), ցածրախոյրային կամ տիպիկ (6 ամիս խոնավ, 6 ամիս չորային) և անապատացված սավաննա (8-9 ամիս չորային, 2-3 ամիս՝ խոնավ): Տարվա չորային ժամանակահատվածում (ձմռանը) սավաննայի խոյրային բուսականությունը կարելի է ասել խանձվում է և խոյրակեր կենդանիները՝ զերբեր, այծքաղներ... միգրացիա են կատարում կամ դեպի սավաննաների համեմատաբար խոնավ շրջաններ, կամ մյուս կիսագնդի մերձհասարակածային գոտի, որտեղ ամառ է, խոնավ ժամանակահատված և հարուստ ու փարթամ խոյրային բուսականություն... Սպիտակ արջերը ևս կեր հայթայթելու համար հսկայական տարածություն են անցնում արկտիկական անապատներով և սառույցների վրայով, արկտիկական սառը ծովերով լողալով հասնում փոկերի, ծովացուների գաղութներին...